

ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ չափա-
համար չէ որ կը հրատա-
րակուի:

ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ տունէ
տուն ու քաղաքէ քա-
ղաք շրջելով դրամ կամ
բաժանորդ չի մուրար:

ՀԱՅ Ժողովրդի յառաջ-
դիմութիւնը մեր չափն
է, իսկ Հայոց ազատու-
թիւնը ԱԶԱՏՈՒԹԻՒՆԻ
նպատակն է...

Ազատութիւն

Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Circulation
larger than
any other
Armen. paper
in the U. S.

Դ. ՏԱՐԻ ԹԻՒ 58
ՆԻՒ ԵՈՐԻ, 1892, ՅՈՒԼԻՍ 15
ԳԻՆ ՀԻՆԳ ՍԷՆԹ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ Ձ ՅՈՒԼԻՍԻ ՆԻՍՏԸ

Ատենաը բացուեցաւ ժամ 9ին
ի ներկայութեան գրեթէ քսանի
չափ անդամոց և բազմաթիւ հիւ-
րերու, ընդ որս և տիկնայք: Ան-
դամներէ, շատեր բացակայած էին
ոմանք զիւրազանցութեան և այլք
Փաթըրընի հարկերամակի հան-
գիսի ներկայ գտնուելու պատճա-
ռաւ:

Օրուան ատենախօսան էր ՏԵԹ.
Տատըրեան որ ճառեց «բարեկա-
մութեան» վրայ. զանազանեց ճշ-
մարիտ և կեղծ բարեկամութիւնն
և ցոյց տուաւ թէ մարդիկ պէտք
ունին բարեկամի, կենաց այս պայ-
քարին մէջ:

Ջերմապէս ծափահարուեցաւ
և շնորհակալութեան քուէ ստա-
ցաւ. ՏԵԹ. Այլազեան ևս աւել-
ցուց մի քանի կէտեր բարեկամա-
կան խնդրոյն վրայ:

Օրակարգին շարքաւ Գործ.
Ժողովոյ անդակագրին ընթերցու-
մըն եղաւ, որ ըստ սովորականի
կամ ոչինչ կը պարունակէ և կամ
Ժողովականաց «կըլլեցնելու նոր
մանթար» մը:

Անցեալ նստին երեք նոր ան-
դամներ օրինաւորապէս առաջարկ-
ուած և Դիւանին ի քննութիւն
առ Գործ. Ժողովն յղուած էր, և
Հայկական Միութիւնն կսպասէր
նոցա նկատմամբ մի տեղեկագիր,
սակայն Գործ. Ժողովոյ պետը այդ
անուանը երկուսն «յարմար» էր
դատած և երրորդն «անյարմար».
Ընդ նմին և բերելով երկար շարք
մը անուններու որոց ամենքն ալ
ՅԱՐԱՐ Ինքնով ընտրութիւնն
կը յանձնարարէր:

Ատենադպրին ՏԵԹ. Արշակու-
նի, դիտել տուաւ անմիջապէս թէ
երեք անուններու նկատմամբ
բերուած տեղեկագիրն կըմտնէր,
բայց չէ՛ր կրնար հասկնալ նշանա-
կութիւնն ա՛յն վերջին կարգ մը
անուններու յանձնարարութեանն:
Անդամք կընտրուէին Հայկական
Միութեան ընդհանուր Ժողովոյ
և ո՛չ անոր ստորադաս մարմնոյ մը
որ կանուանի Գործ. Ժողով. և և-
թէ օրէնքը չէ՛ նախատեսած այս
պարագան սովորութիւնն այնպէս
է որ ու է ընկերութեան մը ընտ-
րելի նոր անդամոց անուանքն նախ
կը բերուին նոյն ընկերութեան
Ընդհ. Ժողովոյ, յանձնարարուե-
լով մէկ կամ աւելի անդամոց կող-
մանէ: Կան ընկերութիւնք որք
մասնախմբի մը կը յանձնեն նոցա
ընտրելութեան յանգամանքն քնն
նելու և նորէն բերելու Ընդհ.
Ժողովոյ. կան ընկերութիւնք որք
կը յղեն Գործ. Ժողովին: Չեմ հաս-
կընար թէ այս ընդհանուր սովոր-
ութիւնն չը յարգուի, որպէս
ասկէջ առաջ միշտ այնպէս եղած է
այս Միութեան մէջ իսկ, ինչպէ՞ս

Գործ. Ժողովն իր կողմանէ իբր
լրացած իրողութիւն կը բերէ կարգ
մը նոր անուններ և նոցա վաւե-
րացումը կը պահանջէ, մասնաւոր
որ ճիշդ նախորդ նստին մէջ Գործ.
Ժողովը չափ մը յանցաքներէն
քաւուեցաւ իմ ըրած սոյն դիտա-
րութեամբս ի մասին ընտրելու-
թեան մի այլ նոր անգամի, թէ՛
քանի որ Դիւանի կողմանէ չէ յղ-
ուած այդ անունն Գործ. Ժողովոյ,
սա՛ պարտաւոր չէ նկատի առնել
զայդ, որպէս ու է այլ խնդիր.
Հետեւաբար պահանջեց որ այդ
վերջին անունը չեղեալ նկատ-
ուին, և վաւերացուին միայն նո-
քա որք ընտրութեան եղանակի
սովորական ըմբէն անցած են:

Ատենադպրին ՏԵԹ. Վարդապետ
Իսախան օրինաւոր գտաւ եղած դի-
տողութիւնն և յայտարարեց թէ
մերժուած պիտի նկատուին այն
նոր անուններն մինչև որ չգան սո-
վորական եղանակաւ:

Հայկական Միութեան ժամերն
սպառող էին նաեւ — Գարեթէյեան
խնդրոյ մասին տեղեկագիր չէր
բերուած, նկատելով որ քննիչ ան-
գամոց մին բացակայ գտնուած
էր քաղաքէս երկու շաբաթի չափ,
և տիար Հայկունի մեկնելու մտա-
դիր լինելով նորա տեղ ՏԵԹ. Տա-
տըրեան անդամ ընտրուեցաւ այս
խնդիրը քննելու պաշտօն ունեցող
Յանձնախմբին:

Ուրիշ առաջարկներու կարգին
ՏԵԹ. Արշակունի իբր ատենադ-
պր զիտել տուաւ Ժողովին թէ՛
ինքն անգիտելով հասցէն փոխա-
տենադպրին ՏԵԹ. Իշխանեանի, և
զիտեալով որ այս վերջինը զար-
մանալի ապօրինաւորութեամբ մի-
անգամայն Գործ. Ժողովոյ անդամ
մ'էր, որով աւելի Գործ. Ժողովոյ
պետին մօտ, գրած էր ՏԵԹ. Գա-
րեթէյեանին որ յիշեցնէ փոխա-
տենադպրին որ Հրաւիրագրու մէջ
նշանակէ ի գիտութիւն անդամոց
թէ «անուանումն պաշտօնէից տեղի
պիտի ունենայ Յուլիան Զի նստին
ըստ որոշման Ժողովոյ»:

Սակայն ցաւ կը յայտնէր փոխ
ատենադպրին ընթացքին համար
որ բնաւին կարեւորութիւն չէ
տուած Դիւանի, որոյ անդամն է
ինքն, այս հրաւերին, և ցաւ կը
յայտնէր նաեւ փոխա-տենադպրին
այն կարծեա նպատակաւոր ընթաց-
քին համար որով Հայկական Մի-
ութեան անդամոց շատերն չէին
ստանար իրենց հրաւիրագրերն
բնաւին և գանգատ կը բառնային
արդարօրէն Դիւանին դէմ: Տիար
Ատենադպրին կը ծանուցանէր թէ
ապօրինաւոր էր փոխա-տենա-
դպրին կացութիւնն և թէ երկու
ոչ համընդհան պաշտօններ չի կըր-
նար վարուիլ, և երբէք միեւնոյն
անձն թէ համարաւու և թէ հա-
մարաւու չէր կրնար լինիլ. Գործ.
Ժողովն իսկ փոխա-տենադպրին

այս կացութեամբն ապօրինաւոր
դիրքի մը մէջ էր մնացած և մին-
չեւ իսկ իւր բոլոր արողութիւնը չեղ-
եալ պէտք էին համարուիլ:

ՏԵԹ. Գարեթէյեան յայտա-
րարեց թէ ստացած էր Դիւանի
նամակն, բայց ինքն այնպէս ըմ-
բռնած էր իբր թէ Ժողովն որոշած
լինի անուանում և ընտրութիւնը
Հոկտեմբերէ սկսիլ ա՛յն առաջար-
կով զոր եղած էր, մի քանի ամիս-
ներ առաջ, վեցամսեայ պաշտօնա-
վարութիւնն տարեկանի վերածե-
լով:

Ատենադպրին ընթերցաւ ա-
տենադրութեան այն մասն, որ
տարբեր կըմէր և համաձայն էր
Դիւանի ըմբռնման. նոյն նստի մէջ
խօսողներն մեծաւ մասամբ ներ-
կայ լինելով նոքա ևս կրկնեցին
թէ՛ Դիւանի հասկացողութիւնն
ճիշդ էր:

Տիար Ատենադպրին ևս նոյնն
կրկնեց, յետ որոյ Գարեթէյեան
կը բողբոջէր ըստ Ատենադպրին
դէմ և վիճարանութիւնք ծայրա-
հեղութեան տարուեցան: Ատենա-
պետն սխալմամբ քուէի դրաւ
խնդիրը՝ և Գործ. Ժողովը և մի
երկու այլ անդամներ 9 քուէ տը-
ւին իրենց «զուգահիշ», իսկ ճիշդ օ-
րինաց հասկացողութեան կողմն
7 քուէ ունեցաւ, որոյ մէջ չէր
Ատենադպրին ալ քուէն քանի որ
ինքն այնքան զայրացած էր այդ
անիրաւ դիտողութեան դէմ:

Ատենադպրին առանց Ժողով-
ոյ նախագահին դիւրաբար ցու-
թիւնն վերադարձուիլ դիտել տուաւ
թէ՛ մի քանի նիստ առաջ ըն-
դունուած օրէնք մը քուէի դնե-
լէն տարօրինակ կը թուէր իրեն:
Բայց Գործ. Ժողովն իւր ամբող-
ջութեամբն, «ժամանակը ուշէ,
դռնապանը կը նեղանայ, նիստը
նիստը փակուի» և այլ կարգ մը
գոռուած գոչումներ սկսան հանել,
և Ժողովն խիստ վրդովեցաւ:

Այս խառնաշփոթութեան մէջ
Ատենադպրին թուղթ մը յանձ-
նեց նախագահին որով կը հրա-
ժարէր Ատենադպրութենէ: Ժո-
ղովը շնորհակցեց, իսկ նա պնդեց,
յետ որոյ Ատենադպրին ալ հրաժա-
րական տուաւ և Հ. Միութեան մը-
նաց առանց դիւանի. անդամաւոր
երկու հրաժարականներու առջեւ
Ժողովն ընդունեց զայն և խնդ-
րեց ՏԵԹ. Տատըրեանէ որ առ
ժամեայ ատենապետութիւնն ըն-
դունի, իսկ նա ևս մերժեց: Ժո-
ղովն այժմ չունի դիւան. նիստը
այսպէս ցրուելէ յետոյ ձեր թըղ-
թակցը կը լսէր ՏԵԹ. Արշակու-
նի, որ կը յայտարարէր թէ՛ ինքն
ատենադպրութիւն սովորելու հա-
մար չէր ընդունած այս պաշտօ-
նը, Ազգային Ժողովոյ Ատենադ-
պր կարեւոր լինելէ յետոյ, ըստ
խնդրանաց Միութեան սիրայօժար
ստանձնած էր հրաժարեալ ատե-

նադպրին շրջանն լրացնել, և
իողճի մտօք ալ կատարած էր ցարդ,
սակայն չէր կրնար հանդուրժել
ո՛չ կարգ մը անկիրթներու և ո՛չ
ալ մարդաւանջներու ընթաց-
քին. փոխանակ հոս գալու և այս-
պիսի տաղտկացուցիչ նիստերու
ներկայ լինելու, կրնար աւելի օգ-
տակար դարձնել իբր բժիշկ:

Եւ կը հարցնէր Գործ. Ժողով-
ոյ հետ քուէ տուողներու մի քա-
նիներու թէ՛ գիտէի՞ն ինչ բանի
քուէ տուած լինելին. մին հաս-
տատեց թէ՛ չէր լաւ հասկցած ա-
ռաջարկը, իսկ միւսը կատարէր
թէ՛ ինքն Հոկտեմբերին կուգէր
որ ըլլային ընտրութիւններն և ան-
շուշտ այս չէ՛ր Դիւանի բանաձեւն.
ՏԵԹ. Արշակունի լսելով այս բա-
ցատրութիւններն զորս կը արուէ-
ին չափ մը ընկերաց ներկայու-
թեանն, լաւ ածականներ տուաւ
անոնց կրկին հաստատող թէ՛
մարմնով ներկայ էին այսպիսիք,
իսկ ուղեղով ոչ:

Երբ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԻ մէջ դի-
տողութիւններ եղած են Հայկա-
կան Միութեան նիստերու նը-
կատմամբ, ճիշդ այս կարգի ան-
տեղութեանց համար է. Միութե-
անն նիստերու առաջին մասը
իրօք ընտրի է, լաւ բեմախօսներ
կըլլան հրահանգող զԺողովուրդն.
սակայն դեռ ներկայը հազիւ լաւ
տպաւորութեան տակ, ա՛հա՛ տի-
րացու Գարեթէյի մէկ խնդիրը ե-
րեւան կուգայ, Ժողովն կը վրդո-
վի, կը խանգարի և մեծ մամուս
ըսածին նման «առողին կողմին» կը
դառնայ: Չենք կրնար հասկնալ
թէ՛ սա տիրացու Գարեթէյ, իբր
Գործ. Ժողովոյ պետ, ի՞նչ մաս-
նաւոր հաշիւ ունի երկարել ջանա-
լու դիւր պաշտօնի շրջանն, մի՛ գու-
ցէ Ամերիկայի նոր ընտրութեանց
կսպասէ որպէս զի իբր Հայկական
Միութեան Գործ. Ժողովոյ պետն
շնորհաւորական նամակ գրէ առ
պետն Ամերիկեան աղգին:

Կարծեմք ժամանակն եկաւ որ
դիւանադիտական միջոցներէ տար-
բեր եղանակաւ պիտի խօսուի այդ
փառաստէր, անապանծ, կեղծաւոր
փարիսեցոյն, Հայկ. Միութեան
մէջ 9 քուէով Գործ. Ժողովոյ պետ
լինելով, և միւս կողմանէ Տիար
Չէրազի պոչէն բռնել ջանալով և
թերթ մ'ալ հանելով կը կարծէր
թէ՛ իրեն երազած «Տիեզերական
Հայրենասիրական միութեան» ՎԼ-
ՃԱՐԵՍԱՂ պետերէն մին լինելու
պիտի բաւէր, որպէս թէ՛ մար-
դու խըթլըխին եկեր է Հայոց
աղգը:

Այժմ ալ կրօնական բեմախօ-
սութիւններն նոր գործիք ըրած
է, խօսելով Բողոքական Հայոց
հոս՝ հոն՝ ուր որ միջոց գտնայ, որ-
պէս զի սոցա մէջ գոնէ բան մը լի-
նի և անոնցմով զօրանայ և բաժա-

նորդ գտնայ իւր թերթին: Մի-
անգամայն կենէ իրիմեանի ընտ-
րութեան գործին ի նախնուի. այդ
չէ՛նք հասկնար. պէ՛ մարդ, դուռն
բողոքական, էջմիածնի կաթողի-
կոսն քեզ ի՞նչ վերաբերութիւն
կրնայ ունենալ, որ կենես իբր
«Հայք» ընտրելին կը հպակես, և
ե՛րբ, մինչ ամեն բան լրացած է:

Տեսնենք, դեռ ի՞նչ պիտի ու-
նենանք գրելիք: Միութեան յա-
ջորդ նիստը անշուշտ հետաքրքրա-
կան պիտի լինի: ***

ՇՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻԹԻՒՆ

Փաթըրըն 6 Յուլիս

... Խմբագիր,

Պատիւ ունինք տեղւոյս Հայ
գաղթականութեան կողմանէ յայտ
նել մեր խորին շնորհակալութիւնն
այն ամեն անձանց որք հաճած է-
ին Նիւ Եորքէ, ձերգիէ, Քոյնճ
Փոյնթէ և այլ կողմերէ քաղաքս
գալով միանալ գաղթականութեա-
նը՝ այս վերջնոյ պատրաստած
հանդէսին ու թափօրին փայլ մը
տալու համար:

Այն մեծ յաջողութիւնն որով
պսակուեցաւ գաղթականութեան
աշխատութիւնն, արդարեւ կը
պարտինք մասամբ մեր այն ամէն
եղբայրակցաց որք իրենց ներկա-
յութեամբ յարգեցին ու պատուե-
ցին մեր փոքր գաղթականութիւ-
նըն, որ կը փութայ իւր անկեղծ
շնորհակալիքն հրապարակաւ մա-
տուցանել:

Խմբագիր, հաճեցէք այս երկ-
տողիս անկիւն մը շնորհելով ձեր
ազգօգուտ թերթի մէջ

Շնորհակալարտ կացուցանել ձերդ
ի դիմաց Հայ. Գաղթ. Կարգա-
դիր Մասնախմբին

Ե. ՉՈՒԼՃԵԱՆ

ԹԱՆԳԱՐԱՆԻ ՄԻՈՒԹԻՒՆ

Հ. Ե. Թանգարանի Միութիւնն
ստացած է հետեւեալ նուէրներն,
Աբրայ Կոստանդին, Օր. Պայ-
ծառ Պուղոսեանէ:

Առողջարանութիւն, Պ. Գ. Պուղ-
տանեանէ:

Հայոց Պատմութիւն, Պ. Ե. Թա-
նգարանէ:

Մարդարան 2 հատ, Պ. Գ. Գա-
պարանէ:

Մուրճ խմբագրութեանէն
Հնչակ
ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Փոխ-Թանգարանագետ
Մ. Ե. Տաղլեան

ԵՐԳԵՐ ԿՈՒՋՈՒՄ

Մեր հրատարակած Ազգային
երգարանին մէջ նպատակ ունենա-
լով դնել կարգ մը չի հրատարակ-
ուած ազգային երգեր ու բանաս-
տեղութիւններ պատիւ ունինք
ներկայիւս յայտարարել արդոյ
հասարակութեան թէ սիրով պի-
տի ընդունիլ մեզ զրկուած ամէն
երգեր ու բանաստեղծութիւններ՝
հրատարակելու համար այս ընդար-
ձակ երգարանին մէջ:

Առանց երգ մը տեսնելու և
քննելու հրատարակութիւնն չենք
ապահովեր:

ՆԱՄԱԿ ՈՒՍՏՐԷՆ

Յուլիս 14

... Խմբագիր ,

Անցեալ կիրակիէ օր, Յուլիս 10ին Քարբերդի Քէմէրէի գիւղացի Ղազար Գարակէապետեան 18 ամեայ պատանւոյ մը յուղարկուորութիւնը կատարուեցաւ առաւ մեծ հանդիսիւ և ի ներկայութեան վշտակիր խումն բազմութեան : խեղճ տղան որ հազիւ վեց ամիս է Ամերիկայ գտլը, չի գիտնալով իւր գլխուն գալիքը, Ամերիկայի ազատութեան տարեւարձի օր, Յուլիս 4ին, ուրախ զուարթ ժողովրդեան հազարաւորաց բազմութեան հետ քաղաքին մէջ կատարուած փառաւոր ցուցահանդէսին ներկայ գտնուելէ յետոյ՝ երեկոյեան ժամը 4ին առտնններն ալ գնացած էր Պրօնդըսթըրիի գլիմացը գտնուող հասարակաց մարդահօտանի մը վրայ օդապարիկի մը արձակման հանգէսը գիտելու, և մինչ մարդկային հանճարին այդ չքնաղ արտադրութիւնը շորս արիասիրտ անձինք ունենալով իր գրկին մէջ յաղթապանք, կը վերանայր յօգն «Կուտ պայ» ըսելով հանդիսատէս խումն բազմութեան, և փոխադարձաբար ողջնշուելով ժողովրդէն ուրախութեան և զարմացման աղաղակներով և ատրճանակներու պայթիւններով, նոյն պահին, կամ ինչպէս կ'ստուէր, քանի մը մը վայրէջանայ յետոյ առանձին պայթեան մ'ալ կ'ըսէր հոն բազմութեան մէջ, որոյ կ'աջադէպ «զարկաւ, զարնուեցաւ» աղաղակներով իրարանցում մը, ոտսիկանք կ'առնէին և ահա կը տեսնուի որ Հայ մ'է, դարձեալ Հայ մ'է որ զոհ կ'երթայ օրուան հանրական ոգեւորութեան : Ծաղկահասակ Գարակէապետեանն էր որ գլխէն գընտակահար լինելով արինաթաթաւ ինկած էր մարդագետնին վրայ, կարծես չարաշուք զոհաբերութեամբ մը մատուցից ընկ ուղեւորը Հայերն ալ տեղացի ժողովրդեան մեծադժուրդը չարժման : ոտսիկանք անովջապէս կառքը դնելով կ'օրիսադրեն զինքը քաղաքին հիւանդանոց, ուր բժիշկները կ'օրութեան դարմանելու, թայց ի զուրկնտալը մինչև ուղեւոր միտած էր, և վեց ժամ միայն անձայն անխօսուն խալէ գկնի կ'վախճանի : յաջորդ օրը քաղաքին նախնական դատարանին մէջ կատարուած քննութեանն իմացուեցաւ որ զարնողն ալ Հայ մը եղած էր ժողովրդաբար, Քարբերդ քաղաքայի Մարդար Յակոբեան կամ Գէորգեան անուամբ, թայց ոճիրը իրամամբ թէ գլխուածով տեղի ունենալն անորոշ մնացած լինելով՝ յետաճգուեցաւ բուն կամ վերջին դատաստանը յաջորդ ամստան : ամբաստանելը որ նոյն իսկ գէպրին օրը ձերբակալուած էր, կը մնայ ի բանտի : Շատերը ի նկատի ունենալով հանգուցիւյն համեստ և անվառ բնուորութիւնն, կ'ենթադրեն թէ անգողուութեան մը որ արդիւնքը եղած լինի պատահար : Տայր Աստուած որ այնպէս լինէր :

* * *

ՀԱՅԻՔ Ի ԼՈՆԿ-ՍՅԼԸՆՏ

Քօլէճ Փոյնթ, Յուլիս 10

Քօլէճ ֓ոյնթ գեղեցիկ գիււ-
քաղաք մ'է Լոնկ-Սթընտ կղզւոյն
մէջ շինուած, Իսթ-Րիվըր վրայ,
Նիւ Եորքէն գէպի Նիւսիս 9 մղոն
Հեռու որով թեամբ։ Բնակչաց թիւն
է իբր 7000։ 1846ին Տր․ Մէլէն-
պըրի շինած է Հոս Սէն Բօլի դօ-
լէճը, եպիսկոպոսական եկեղեց-
ւոյն սահմանեալ։ Հիմա կուան
գիւղաքաղաքին տեղ այն ատեն
Հալիւ քանի մը ընակաւթիւն կար։
1850ի մօտեբը Քօլէճէնսըն, Գեր-
ման գործարանատէր մը, տեղս
Հաստատեց «Քըպրի» գործարան
մը, որոյ շնորհիւ գլխալի կերպիւ
սկսաւ շէննալ գիւղն։ Այս գոր-
ծարանատէր իր բարեգործու-
թեամբը նշանաւոր եղաւ եւ Քօ-
լէճ ֓ոյնթի բարեբար տիւղոսն
առաւ, եւ որոյ ի յիշատակ 1894
փոփոցի մօտ՝ փոքրիկ գարատա-
նի մը վրայ կառուցուած է մար-
մարիոնէ արձան մը։

Տեղս ունի 2 հասարակաց վար-
ժարան 700 աշակերտներով և քա-
նի մը մասնաւոր դպրոցներ, Լու-
տերական որբանոց մը և 2 հրշէջ
մեքենաներ :

Գօլճէ՛մ փոյնի՛թ ընական գեղեցիկութիւններով օժտեալ գիւղաքաղաք մ'է՛ . ամառը զուարճալի վայր մ'է՛ անզոյ շրջակայ մեծ քաղաքաց ընտիրէնքուն համար : Դիւղին անմիջապէս մօտերը կան յիշրիկ ծառատաներ ու ընդարձակ դարաստաններ՝ ուր Հայեր գրեթէ՛ ծամեն հիւրակի՛ն կը դուստուրն մեր երկրի խաղերով զուարճանալու համար :

Հինգ գործարաններ կան գիւ. ղիս մէջ, որոց երկուքը մետաքսի կը վերաբերին. սոցա մի՛ Ֆնքիի գործարանն , որ 400ի մօտ գործաւոր կը պահէ , ունի 3 Հայեր , իսկ միւսն՝ Օրէնհէյմիի գործարանը որ տեղը ոյս Հայոց մեծագոյն մասին գործէ հայթայիտիւն է հոս : Այս գործաւորացի մէկ մօտը կը կազմեն Տիգրանահէրացիք , իսկ մնացեալը Բարբերդցիներ են :

Տեղւոյն Հայերը 3 տարիի մօտ
կը լինի որ այս գիւղն սկսեր են
հաստատուիլ: Եղաւ ատեն որոյ
թիւը մինչեւ 80ի հասաւ, բայց
հիմայ հայրւ 40ի չափ կը հաշուին,
որոնց մէջ միայն հինդ ընտանիք-
ներ կան: Ի սկզբէն թէպէտ ան-
ղաղիք այնչափ լաւ չէին նայեր
Հայոց, բայց ժամանակէ մը վերջ
Հայք իրենց ազնիւ բնաւորութեան
պատճառաւ, և թէ գործաւորա-
կան միութեանց անդամակցելով՝
սկսան տակաւ առ տակաւ աղէկ
երեւել յայն սեղադուցն:

Ինչպէս ամէն ուրեք՝ հաս ևս
մեր սա փոքրաթիւ ազգայնոց մէջ
ազգային տարրեր կուսակցութիւն-
ներ կան: Շատերը շէջոք ան-
տարրեր են, իսկ մնացեալը ումանք
Հայոց Հայր Միութեան կը համակ-
րին, և ոմանք ալ Հնչակեան են:
Խախտածէի չ տեսնել որ տեղւոյս
Հայք իրենց չըջնասկի մէջ երբեմն
համարմունք կընեն, և իրենց կա-
ռոյցութեան համեմատ կաշխատին
օգնել այն մեծ ու սուրբ գործին
որոյ օգնել իւրաքանչիւր Հայու
գարտականութիւն չ նուիրական:
Եւ իցիլ թէ մեր անտարրեր եղ-
աւորք ևս գտնէ անտարրեր կու-
սակցութեան մը տակ, իրենց յար-
արք երեւոյճ եղանակաւ սկսէին՝
նչ որ կրնային ընել իրենց տա-
ւարադրէ եղբայրը համար:

ՀԱՐԴԱՆ

ՅՈՒԼԻՍԻ 4րդ Ի ՓԱԹԸՐՍԸՆ

Յուլիսի 4ը, Միացեալ Նահանգաց ազատութեան տարեգարձը մեծ շքով տօնուեցաւ Միութեան բոլոր քաղաքներուն մէջ, բայց փաթըրբըն քաղաքն արտա-բայ կարգի հանդէսներ ու թա-փօրներ կազմեց այդ առթիւ նոյն քաղաքի զարգացման 100րդ տա-րեդարձի հանդէսն նոյն օրուանն էնտ տօնելուն պատճառաւ :

Մեր այդ փառալսելի Հայրենասիրիցը ևս մաս ու բաժին ունեցան ընդՀանութիւն շարժման ու տօնախմբութեան մէջ, և այդու լաւ անուն մը չահելէ՛ց դատ տեղացւոց աչքին աւելի Համակրելի երեւել սկսեցին: Ամերիկացիք միանգամ ևս առիթ ունեցան Համոզուելու թէ՛ Հայք ոչ միայն կաշխատին իրենց ազատութիւնն ձեռք բերելու Համար, այլ և կը յարգեն ու կը տօնեն այն օրերն յորս ուրիշ քոյր աղինք իրենց ազատութիւնն ձեռք ձգած են արեան և կրակի մէջ նետուելով:

Յուլիսի երեքին Նիւ Եորքէ
ու չըջականէրէ բազմաթիւ Հայեր
Փաթըրըսըն գնացած էին տեղւոյն
Հայոց կազմակերք թափօրլին միւս
նալու ու Հայ գուման տեւի մեծ
ու շքեղ ցոյց տալու Համար: Նոյն
օր միջօրէէ վերջ ժամը 2ի ատեն-
ներն մասնաւոր սրահի մը մէջ
խմբուեցան մեր ազգայինք որք
80ի չափ կը չաշուէին: Տեղւոյն
Գաղափականական Միութիւնն Հոն
Հոն Նիստ ունէր այդ օր՝ Հատե-
ւեալ աւուր կարգադրութիւննե-
րըն ամբողջացնելու Համար: Օր-
ուան ատենապետն էր Տ. Յ. Զուլ-
ճեան որ բարի գալուստ մաղթե-
լէ վերջ Նիւ Եորքի և չըջականից
Հայոց՝ ժողովն բացաւ ու ինչ ինչ
ընթացիկ գործեր կարգադրելէ
յետոյ ժողովրդեան խնդրանօք

րաւորեց այցելուներն խօսիլ ժողովին ու իրենց կարծիքն յայտնել այն կարգադրութեանց համար որ ըրած էր տեղւոյն գաղթականութիւնն: Կարգադիր մասնախմբի խնդրանք լրագրոյս խմբադիրն տրուեցաւ առաջին խօսքէն որ կէս ժամու չափ խօսեցաւ եւ բացատրեց թէ այսպիսի ցոյց մը ինչ օգուտներ կրնար բնծայել մեր ազգային անուան ու պատուոյն, եւ իւր խօսքն կնքեց մտղթիւլով որ օր մը մեր ազգային ազատութիւնն ու մեր բաղձնադիւն քաղաքացի հիմնարկութեան տարեդարձներն տօնլու բարեբաղդութիւնն ունենանք մեր հայրենի աշխարհին մէջ՝ Հայ դրօշակի պաշապանութեան ներքեւ:

Հ. Էփինեանէ յետոյ խօսեցան Տխարը Գ. Նազարեան, Փաթըր-սընի գաղթականական ժողովոյ արտաքին թղթակցութեանց ատենադպիրն, Յ. Ագաթեան, Սասունեան և այլք: Երբ ատենախօսութիւնը սկսեցան կարգալի լր մասնականութիւն տեղադրուիլէն վերջնական մեծ դրօշակն որ պատրաստուած էր հետեւեալ առեր թափօրին համար, վեր բարձրացնելով ծածանել սկսեց օգին մէջ, կէցցեներու և որոտագին ծախահարութեանց աղաղակին մէջ: Բաւական ատեն անցնելէ վերջ հետեւեալ առեր թափօրին համար յորձեր տեղի ունեցան, նորեկներուն համար գաւազաններ ձեռնոցներ ու նշաններ բաժնուեցան և ի վերջոյ բաղմութիւնն ցրուել սկսեց հետեւեալ օր ստաւօտեան ժամը շին նոյն սրահին մէջ գուժարարական պայմանաւ:

ՅՐԵՄԻԱՍԻ ԿՐԻՍՏՈՍ ԿՆԻՃԱՆԻՔԻ ՆԻՐՈՍ

և որսամանց օր մ'էլ․ տեղատարար անձրեւը ահ ու դող ըլլած էր ոչ միայն Հայերն այլ քաղաքները Ժողովուրդն որ մեծ պատարաստութիւններ տեսած էր հետեւեալ աւուր համար։ Բայց Յուլիսի շորը պայծառ արեւով ու զով օգով ծնաւ, ծիծաղ մը ունենալով վճիռ երկինքի երեսն։ Որդեալ Ժամուն Հայք սկսեցին գումարաւիլ։ 12 լաւ կազմուածքով Հայեր զգեստաւորեցան Հայկական հին ու բաղմածախ հագուստներով, և Թափօրականք իրեցց տեղը բռնելով դուրս ելան սրահէն խումբ մը Սմերթիկեան նուագաւորներ առնենալով իրենց սաղն։

Պահ մը վերջը Հայ թափօրն իր տեղը բռնեց մեծ թափօրին մէջ՝ Մեր խմբի առջեւէն կը քալէր հըրամանատարն՝ Պ. Գ. Պարոնեան որ Հայկական փառաւոր հագուստներով զգեստաւորած ու ձկնաւոր ճանապարհէ ցոյց կուտար Հայոց բանակին։ Սորա կը հետեւէր Ամերիկեան մեծ ու մետաքսեայ մի փառաւոր գերօշակ որ կը կրէր Պ. Մ. կարճակտի, յետոյ կարգադիր սպան՝ Պ. Ե. Չաքոսեանն որ իր

մանրալայն զգեստաւորեալ կա-
ռաջնորդեր Հայ խմբին՝ սորա կը
հետեւէին երկուստանս զընտա-
ւորեալք, որոց հագուստներն,
գլխարկներն ու նիզակներ արեւու
առջև լիարժեքով կը շլացնէին
հետաքրքիր հանդիսականաց աչ-
քերն ու կը գրաւէին ամէն ան-
հատի խորին ուշադրութիւնն։
Մի այլ մետաքսեայ ճերմակ դրո-
շակ որ կը քայէր ասոնց մէջէն կը
կրէր Հայերէն եւ Անգղիերէն տա-
ռերով Հայ խմբին անունն ու թիւ.
որոք դրօշակակիրն էր Պ. Թ. Ղա-
զանճեան։ Հայկական սիւսուաւոր
բրգայակ որ կը կրէր Պ. Սասունէն որ
մատնանիլ կը լինէր ամէն կողմէ

ողբի կը ներշնչէր Հայ թափօրա-
նանայ որք հարկուէ աւելի էին,
բացի անոնցմէ որք ժամանակին
հասած չի լինելով դուրս մնացեր
էին հանդիսատես ժողովրդին մէջ։
Թափօրին մէջ, ինչպէս որ վը-
կայեցիլն տեղեկութիւն տալու
նէ փառաւորն ու լաշի դարնողն
Հայրդ խումբն էր իւր հետաքրք-
րական ու փառաւոր հազուստ-
ներով ու վարժ քալումքովն։

Հանրէան երեք ժամ տևեց և
յետոյ Հայք խմբավին եկան իրենց
սրահին մէջ խմբուելու ու Հան-
գըստանալու Համար: Հոս թեթե-
ճաշ մ'ու բնական մատուցուեցաւ
թափօրականաց:

Պահ մը հանդստանալէ յետոյ
նուազարանք հնչելով ուրախու-
թիւնն սկսեց: Նուազարանաց
ձայնն երբեմն կընդհատուէր ազ-
գային երգերով ու ծափահարու-
թիւններով:

Ատենախօսութիւններ եղան այդ օր, ու բաժակներ առաջարկուեցան նշանաւոր ազգայիններու կենաց: Ի մէջ այլոց խօսեցաւ Պ. Ա. Թարազեան որոյ առաջարկութեամբ մի փոքր հանգանակութիւն բացուելով՝ 12 աղայրի չարիք ըրաւ՝ հաւորուեցաւ ի նըստացաւ Հ. Հ. Մկրտիչան:

Օրը բաւական տարածամաս
էր երբ ժողովուրդն ցրուիլ սկսեց
զոհ սրտով ու լաւ տպաւորու-
թեան ներքեւ :

U.

ԱՐՐԱՀԱՄ ՍԱՀԱՊԻ ԵՒ ԸՆԿ.
ԱՐԵՒԵԼԵԱՆ ՃԱՇԱՐԱՆ
ԹԻՒ 48 ԿՐԻՆՈՒԼՅ ՓՈՂՈՄ

Արեւելեան տմենաընտիր կե-
րակուր, զիւրամատչելի գներ, և
ամէն ինչ մօքսւր բառին կատար-
եալ նշանակութեամբ :

Հայ ընտանիք մը, իթիւ 87
էմիլիթի Փողոց, Պրուքլին, գիշե-
րօթիկներ (Պօրաբը) կուղէ չափա-
ւոր գնով: Արեւելեան խոհարա-
րութիւն, մաքուր կերակուրներ
մեծ ու օգտէս սենեակներ:

ՀԱՎԵՐԹ՝ ԻՄՓՐՈՒՎՄԵՆԹ ԸՆԿ-

9 ՈՒԹՐԼՏ ՊԻԼՏԻՆԿ

HAWORTH IMPROVEMENT CO.

9 WORLD BUILDING

Ձեր ուշադրութիւնը կը հրաւիրենք Հասօրդի վրայ, որ ունի գեղեցիկ գիրք մը, Ուէսթ Ծօր երկաթուղւոյն գծին վրայ, Նիւ Եորքէ 14 մղոն հեռաւորութեամբ, Եօնքըրսի գիմացը: Եկէ՛ք շինելու համար խոշոր կտոր հողեր 25 ոտք լայնութեամբ և 150 ոտք երկայնութեամբ, կամ 3750 քառակուսի ոտք տարածութեամբ, պիտի ծախուին իւրաքանչիւր քառակուսի ոտքը 3 անգամ և կախան սէնթի և կամ կտորը 112 ու կէս և 150 տօյարի (դիրքին համաձայն):

Այս հոդերը կրճածն վաճառուիլ ամսական վճարքով, նախ՝ 10 ամիսը կանխիկ և յետոյ ամիսը 5 ամիսը տալով:

Մեր առաջին 50 յաճախորդներուն հետեւեալ շնորհումներն կլինին.

Ա. — Վճարելի դրամին համար տոկոս չառնուիր :

Բ. — Ամեն անոնց որք կանխիկ կը վճարեն և 1893 Յունիս 1էն առաջ առն կը շինեն, հողին գնոյն մէկ երրորդը պիտի զեղջուի:

Հողերը տեսնելու համար Հաւօրդէ երթալ ուզողները չոգեկաւորի ձրի տոմարները կրնան ստանալ Եւիկելով ար.

Պ. Բ. Յ. Վարդուհեանց ի թիւ 334 իստ 21րդ փողոց, Ա.ԶԱ. ՏՈԽԹԻՆԻ խմբագրատունն է Հաւորդ Հիմրովվէնթ Ընկերութեան, ի թիւ 9 Ուօրլա Պլախին, Նիւ Եորք: Հետեւեալ անձինքը կը յանձնատունն ու կը մտնէ կամար միաստանն:

[illegible]

«Ինձ մեծ հաճույք կուտայ ըսել թե՛ Հաւօրդէ երկիրս այցելւելն յետոյ, դիրքը կը նկատեմ իբր ամենացանկալին որ կը ճանչնամ ինչ ետրքի չըմակալայ մէջ, որ մեծ առաւելութիւն ունի: Գետինը կորացել է, «Իբձէ գեղեցիկ», և դիրքու թեամբ կրնայ բարձր աստիճանի մշակուիլ: Յօղը մարտուր և ներշնչող է, ջուրը մաքուր և աղէկ»: Նիւ ետրք քաղաքին զրայնութիւնը մէջ գտնուած շատ տեղերէ՛ չատ աւելի ազատ է առարկելի երեւոյթներէ: Նտեւ անտառներու, դաշտերու, առուակներու և այլերց հաճելի զանազանութիւն ունի: Հին ջրաղացքը դուրի չէ՛ իրական հրապոյրէ և պատմական արժէքէ: Մէկ խօսքով պէտք է ըսեմ որ տեղը խիստ պայծառ կայացայ մը ունի»:

ԲԱՄԱՌ ԲԱԹԻՊԱՅԻ ՀԱՄԱՐ

Եղիապոսէն Հայ սմն մէկ տո-
ւար յղած է մեզ ի նպաստ Քամառ
Քաթիկոսի բացուած հազանա-
կութեան :

Open day and night

Equinox Binding & Mailing Co.
438 Pearl Street,
NEW YORK.
Open day and night.

ՄԱՆՈՒՑՈՒՄ.

Այն ամէն Հայերն որք կը փափաքեն զրամ զրկել իրենց բարեկամաց ի թուրքի կամ ի թուրքական, Չէք Պանը գրամատան փոխանակադիրներն պիտի գտնեն ամենապարզով, ամենապարզ եւ արագով:

MATHEWS & CO., BANKERS.
No. 2 Wall St. New York

Scott Printing Company,

JOHN SCOTT, Manager.

PRINTERS.

PRESS ROOMS:
220 William St., NEW YORK.
Presses Running Day & Night.

Հայ երկրասարգաց թանգարանի Միութեան կանոնադրութիւնն պատու ունի ծանուցանել թէ ի դիւրութիւն ընթերցողներ հասարակութեան հետեւեալ գործակալութիւններն հաստատուած են Նիւ Եորքի, չորսկայից եւ այլ քաղաքներու մէջ.

- Տ. Մ. Տաղան, Նիւ Եորք 779 Երկ. Ավ.
- Տ. Յ. Աղապան, Նիւ Եորք. 432 Ուէսթ 56րդ Փողոց
- Տ. Մ. Շիլմանեան, 91 Մատիւն Փողոց Նիւ Եորք
- Տ. Յ. Համարեան, Ն. Ե. 43 Սանտ Փոյց Պրուէլին
- Տ. Յ. Պատմական, Քոլէճ Փոյնթ, Լ. Ա.
- Տ. Կ. Չանգալեան, 455 Փարաիս Ավ. Ճէրդի Սիթի Հայթ, Ն. Ե.
- Տ. Պ. Տէյրմանեան, 313 Ուէսթ Բոյրիթ, Ուէսթ Հոյսթըն Ն. Ե.
- Տ. Յ. Չուլեան, Փարթուր, Ն. Ե.
- Տ. Յ. Թոփաշեան, Ֆիլատէֆիա, Փէնս.
- Տ. Յակոբ Թոփաշեանեան, Մալպրո և Թըրնթիլ, Քոնն.
- Տ. Տ. Պոնարաբեան, Փրովիտէնս, Բ. Ա.
- Տ. Կ. Սոպանեան, Եօնքըրս, Ն. Ե.

ԺԱՄԱՆԱԿԸ ԴՐԱՄ Է

ԻՍԿ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ

ՄՏԱՏԱՆՁՈՒԹԵԱՆ ԴԱՐՄԱՆ

Կ. ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

53 CEDAR ST. N. Y.

Կիւլպէնկեան տունն որ հանրածանօթ է ամէն տեղ, վաճառականական ձեւով Նիւ Եորքի մէջ հաստատուած լինելով՝ փոխանակադիր եւս կուտայ եւրոպայի գլխաւոր խի թուրքիայի ամէն քաղաքաց համար: Ամերիկեան Հայ գաղթականք որք փոխանակադիր զնեւը համար միւսը գծաւորութեանց բաղկած ու ժամանակի կարողութեանց ծննդեան զրամատանց գլխաւոր, այսուհետեւ դիւրութեամբ և առանց ու եւ կորուստի պիտի կարողանան այս վաճառականական տան փոխանակադիրներն ձեռք ձգել անձամբ կամ նամակաւ գլխաւոր Տ. Կ. Կիւլպէնկեանի վերոյիշեալ հասցէով:

Նիւ Եորքէ դուրս բնակող անձինք գծաւորութեան չի բաղկեւոր համար կրնան իրենց յղել զրամ իւրեանց քաղաքի գրամատունն զնեւ և անկէ չէք մը առնելով յղել յիշեալ հասցէին, ուրկէ պիտի ընդունին անոր փոխարէն խնդրուած փոխանակադիր վերադարձ թղթատարով:

Աւելի մանրամասնութեան համար դիմել հետեւեալ հասցէին

GULLABI GULBENKIAN & Co.

53 Cedar St. New York City,

ՆՈՐ ԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ ԱԶԳԱՅԻՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Հ. ԷԿԻՆԵԱՆ

Այս երգարանն որ իւր տեսակին մէջ մինչ ցարդ տպուածներէ թէ՛ գերազանցն և թէ՛ ամէնալոյս դարձան յալտի լինի, մաքուր թղթի վրայ ընտիր տպագրութեամբ: Բոլոր գիրքն պիտի լրանայ մի քանի օրէն:

Հասարակութեան թախանձանց համեմատ որոշած ենք իւր 500 օրինակ Փորմա առ Փորմա ծախել: Մէն մի Փորմա 16 երեսէ կը բաղկանայ և կարծէ երկու սէնթ: Ամբողջ գրքին գինն է 50 սէնթ, 75 սէնթ և մէկ տոլար՝ կազմին համեմատ:

Սոյն Փորմաներէն գնել ու գողներ կրնան դրամն յղել խմբագրութեան փոխալի գնոյն հետ մէկտեղ: Մէկէ աւելի օրինակ դրողներէ ճամբու ծախք չի պահանջուիր:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԲԱՆԱԼԻ ԱՆԳՂԻԲԵՐԷՆ ԼԵՁՈՒԻ

Նիւ Եորք — Տպար. ԱՐԱՐԱՏԵԱՆ Գրեց

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԳԻՆ 25 սէնթ

Անգղիերէն ուսանիլ փափաքողաց համար խիստ ընտիր և յարմար մատենիկ մ'է սա, դիւրահասկանալի ոճով:

Գնել փափաքողք պարտին դիմել խմբագրութեան կամ հեղինակին հետեւեալ հասցէին.

A. AYVADIAN
49 Columbus Ave. N. Y.

Շնորհակալութեամբ ընդունած ենք Հ. Ե. Թորոսի «Ընտիր Հայկազունք» ի երկրորդ տպագրութիւնն՝ պարզ և աշխարհիկ լեզուով, և բանաստեղծական ոճով որ շատ մը ընտիր Հայկազունք կենսագրութիւնն կուտայ: Տպագրութիւնն խիստ մաքուր է և պատկերներն ընտիր: Գինն է 5 Փր. Տպագրութիւն Միլիթարեան, Վէնէտիկ:

Դասաւորութիւնն Ռուսիեան դրամով, Հայր Կղեմէս Վ. Սիւլիկեանի: Վիէննա տպագրութիւն Միլիթարեան:

Մարգարան, Պ. Գ. Դասաւորեանի, որ կուտուցանէ զինուորական կրթութիւն, գինն է 50 սէնթ: Կը վաճառուի խմբագրութեան քով:

«ՏՀԻ Արմինիւն» օր տհի փիլիսոփա Արարատ» Հայք կամ ժողովուրդ Արարատայ անունով իւր 220 երեսէ բաղկանալով մի գիրք հրատարակուած է Տքթ. Մ. Ս. Գարբիշեան: Գրքին տպագրութիւնն մեր ստացած պրակտիկ դաստեղծութեանց մեջ է: Հարկ է հոս յատկել թէ այս Տքթ. Գարբիշեանն չէ այն անձը որ «Հայք» անուն թերթ մը կը հրատարակէ քաղաքի մէջ:

ՏԲԹ. Չ. Բ. ԹԻՆՏՈՐԵԱՆ
41 Oliver St. N. Y.

Հիւանդ կընդունի յիշեալ տեղէն ամէն օր կէս օրէ վերջ ժամը 25ն մինչեւ 5. Իսկ ուրիշ ժամերու մէջ Տէքթ. Գրքին տեսնելու համար առանձին կարգադրութիւն կը լինի:

ՀԱՅՐԻԿԻ ՊԱՏԿԵՐԸ
Հ. Հ. Մ. Նիւ Եորքի Օթեակը չիւնել տուած է ՀԱՅՐԻԿԻ փառաւոր պատկերներն ընտիր քարտի վերայ մաքուր տպագրութեամբ: Կը վաճառուի խմբագրութեան քով համար 10 սէնթի:

ԷԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ

438 ՓԵՐԼ ՓՈՂՈՑ

Էկինեան կազմատունն որ ամենէն ընդարձակն է Հայ կազմատուններու մէջ, և որ կը մրձի տեղական շատ մը կազմարար ընկերութեանց հետ, իւր չոգեչարժ մեքենայից ու վարպետ կազմարար շնորհիւ կարողացած է առնու ունենալ հրատարակի վրայ և շահիլ պատուարներ համբաւ:

Այս կազմատունն իւր նոր և ընդարձակ գործատան մէջ նորաւոր կարգադրութիւններ ըրած է աւելի ընդարձակ հիման մը վրայ գործ ընկելու համար: Հոս կը կազմուին գրքեր և տետրեր ամէն քանակութեամբ. կը ծալուին թերթեր ու հանդէսներ ևւն. ևւն. կարճ ժամանակի մէջ:

Գինքը չափաւոր են, ամէն տեսակ կազմի համար: Միանգամ փորձողն ուրիշ կազմատուն մը չի դիմիր բնաւ: Մի մտնաք մեր այժմեան նոր հասցէն որ է

438 Pearl St. N. Y.



REGULATE THE STOMACH, LIVER AND BOWELS, AND PURIFY THE BLOOD.

A RELIABLE REMEDY FOR

Indigestion, Biliousness, Headache, Constipation, Dyspepsia, Chronic Liver Troubles, Dizziness, Bad Complexion, Dysentery, Offensive Breath, and all disorders of the Stomach, Liver and Bowels.

Ripans Tabules contain nothing injurious to the most delicate constitution. Pleasant to take, safe, effectual. Give immediate relief. Sold by druggists. A trial bottle sent by mail on receipt of 15 cents. Address

THE RIPANS CHEMICAL CO., 10 Spruce Street, New York City.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՊԱՐԱՆ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՅԺՄ ՏԱՍՆ ԵՒ ՀԻՆՉ ԵՐԸ ՄԷԿ ԱՆԳԱՄ

Տարեկան բաժանորդագինն մէկ տոլար մ'է միայն, ԿԱՄ ԵՐԵՔ ԵՐԸ ՄԷԿ ԱՆԳԱՄ.

Ամէն մէկ թուի մէջ խմբագրական յօդուածներ, թղթագրութիւններ, դուրսեւելք և այլ կարեւոր յօդուածներ:

ՆՄՈՅՇՆԵՐ

Մ. ՓՈՐԹՈՒԹԻՒՆ ԳՈՒԼԵՆԿԻ

Մ. Փորթուգալեանի դրած Հայրենասիրական ոտանաւորներէ մի քանին ամփոփուած են այս տետրակի մէջ իրեն նույնը դասաւորուած և զանազան տպագրութիւններ իւր երբեմն դրած ոտանաւորներն որոնք ժամանակին հրատարակուած չը լինելով կորսուած են այժմ: Այն մի քանի ոտանաւորներ որոնք իրեն նույն ամփոփուած են այս տետրակի մէջ: ցիր ու ցան կը գտնուին Կ. Պօլիս տպագրուած աղագային երգարաններին մէջ որոց վերտալին տպագրութիւնն վաղուց արդէն արգիւրուած է և «Ասիա» և «Արմենիա» լրագիրներին մէջ: Նմանաբար մէջ փոքրիկ տեղեկութիւններ արձուած են նաեւ թէ այդ ոտանաւոր ինչ տպագրութիւններ իւր ներշնչելով գրուած են: Գինն է 15 սանթիմ:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Կ Ս Կ Ծ Ա Ն Ք

Գրեց Հ. ԷԿԻՆԵԱՆ.

Հեղինակին ընտիր մէկ բանաստեղծութիւնն է այս արձակ գրուած, որ կը վաճառուի խմբագրութեան քով համար 5 Սէնթի միայն:

Ա Ր Մ Է Ն Ի Ա

ԱԶԱՏԱԿԱՆ ԿԻՍՏՇԱՐԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՂԴԱԿԱՆ, ԵՒՆ. ԵՒՆ.

Տարեկան բաժանորդագինն է չորս տոլար. Հասցէն, Redaction du journal "Armenia", Marseille, France

ՀԱՆԴԷՍԱՆ ԱՄՍՈՐԵԱՑ ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄԵԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍԱԳԻՏԱԿԱՆ.

Ե. Տարի 1891. Տարեկան բաժանորդագինն է 10 Փր. (4 Րուբլի.) Հասցէն, Redaction de la Revue "Hantess", Vienne, (Autriche). VII Mechitaristengasse, 4.